Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազումի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Ուսումնառության ակտիվ մեթոդները սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց

Վերապատրաստող, մենթոր՝ Սոնա Եղիազարյան

Ուսուցիչ՝ Գոհար Պլուզյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Գլուխ 1. Ներածություն …….…2

Գլուխ 2. Ուսուցման ակտիվ մեթոդների արդիականությունը……...4

Գլուխ 3.Ուսուցման մեթոդների տեսակները……5

Գլուխ 4.Ուսուցման ակտիվ մեթոդները որպես աշակերտների ներգրավվածությունը ապահովող միջոց……..……..9

Գլուխ 5.Եզրակացություն…….15

Գլուխ 6. Գրականություն……..17

Ներածություն

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգի գլխավոր նպատակն է յուրաքանչյուր անհատի համար ապահովել որակյալ կրթություն: Ինչպես գիտենք հանրակրթական ծրագիրը միտված է ապահովելու ակնկալվող վերջնարդյունքները, զարգացնելու սահմանված կարողունակությունները:

21-րդ դարում հասարակության մեջ մեծանում են պահանջները բարձրագույն մասնագիտական կրթության նկատմամբ, որը պետք է պատրաստի պահանջված մրցակցության ընդունակ մասնագետներ: Դա է պատճառը, որ կրթության ոլորտը շարունակ փոփոխությունների է ենթարկվում:

Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը պայմանականորեն կապված է գործնական պահանջներով՝ ուղղորդելով սովորողին դեռ դպրոցական տարիքից զարգացնել ուսումնահետազոտական գործունեությունը:

Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այսօր կրթական համակարգում արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նոր ու ակտիվ մեթոդների գործածությամբ:

Ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Իր հերթին ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Նմանատիպ մեթոդներն ապահովում են խոր թափանցում ուսուցանվող նյութի բովանդակության մեջ:

Ժամանակակից մանկավարժության հիմնական խնդիրը ոչ միայն անհատին որոշակի գիտելիքներով ու կարողություններով զինելն է, այլև սովորողների մեջ հետազոտական և ստեղծագործական ունակություններ ձևավորելը: Այս ունակությունների ձևավորումն ու զարգացումը արդյունավետ է, երբ երեխային հնարավորություն է տրվում, ուսումնասիրելով նախորդների փորձը, ստեղծել նորը:

Ուսուցման ակտիվ մեթոդների արդիականությունը

«Ոչ թե հանձնարարված դասը, այլ ուսուցչի հետ համատեղ ձգտումն է, որ հրաշալի աշխարհ է բացում»: Ն. Ռերիխ

Կրթական բարեփոխումների և կրթության որակի պահանջներից ելնելով՝ ներկայումս հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևերի՝ մասնավորապես ակտիվ մեթոդների կիրառմանը ուսումնական գործընթացում:

Թեման արդիական է այնքանով, որ նրա ուսումնասիրման և լուծման կարևորությունն արտահայտվում է ուսուցման և դաստիարակության մեջ, ինչպես նաև մանկավարժական գործունեության հետագա զարգացման համար: Այն մարտահրավեր է՝ ուղղված մանկավարժական գործընթացների բարեփոխմանը ժամանակի պահանջներին համապատասխան:

Արդի ժամանակներում կրթական համակարգում անհրաժեշտ է ձևավորել նպաստավոր ուսումնադաստիարակչական պայմաններ, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն կրթության որակի էական բարելավմանը: Պարզ է, որ ուսուցման ավանդական մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Ուսուցիչը պետք է կարողանա շարժառիթ ստեղծել, հետաքրքրություն առաջացնել: Նման աշխատանքը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն, ուսուցման ճիշտ մեթոդների ընտրություն, ստեղծարար միտք:

Խնդիրն այն է, թե որքանով է ուսուցիչը հմտորեն տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև ուսուցման նպատակով դասավանդողի կողմից ընտրված կամ կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում տվյալ առարկայի ուսումնական նպատակներին: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի և հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտն ակամայից դառնում է դասապրոցեսի մասնակից:

Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

Տարաբնույթ մեթոդների կիրառման հիմնական նպատակը դասի առավել արդյունավետ յուրացումն է: Այն նպատակ ունի սովորողների մոտ զարգացնել մտավոր և զգայական կարողություններ, ինքնուրույնություն, սոցիալականացում:

Ուսուցման մեթոդները, ակտիվ մեթոդների տեսակները

«Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք»: Լ. Վիգոտսկի

Դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է, երբ աշխատանքը տարվում է սովորողների հետ՝ օգտագործելով սովորողների կոլեկտիվ և անհատական աշխատանքը, կիրառելով ուսուցման տարբեր մեթոդներ:

Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք ուսուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործունեության եղանակները, որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը: Մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է, ինչպես նաև սովորողների աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն ու ստեղծագործական գուրծունեությունը զարգացնելու եղանակ: Մեթոդները ուսուցման գործընթացի բաղադրամասերն են, որոնք օգնում են իրագործել ուսուցման նպատակը, խնդիրները, բովանդակությունը, սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը:Այն իր մեջ ներառում է երեք խնդիր՝

-ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն)

-ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ)

-ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա)

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

- ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,
- ուսուցման նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են երեք խմբի՝

1.**Պասսիվ մեթոդ:** Սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Աշակերտը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների հիմնական կրողի՝ ուսուցչի փոխանցած նյութը:

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

2.**Ակտիվ մեթոդ**: Այս դեպքում ուսուցիչը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Ի տարբերություն պասիվ ուսուցման, որտեղ գլխավոր հրահանգավորողն ուսուցիչն է, այստեղ ուսուցիչն ու աշակերտը հավասար իրավունքների դաշտում են:

Սխեմա 2, Ակտիվ մեթոդ

3.**Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ**: Ինտերակտիվ նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ

Ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Այսօր դասավանդման մեջ կան բազմաթիվ ուսուցման մեթոդներ, որոնք կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում: Դրանք նպաստում են սովորողների հետաքրքրության բարձրացմանը, նյութի լավ յուրացմանը, հանդիսանում են աշակերտների ներգրավվածության միջոց: Այդպիսի մեթոդների շարքին են դասվում մտագրոհը, պրիզման, Т-աձև աղյուսակը,եռյակի, հնգյակի մեթոդը, խաճանկարը, Վենի դիագրամը, սատանայի անիվ մեթոդը, ԳՈՒՍ-ը, քառաբաժանման մեթոդը, երիցուկի մեթոդը, մտածող գլխարկների մեթոդը, 5 րոպե շարադրանքը, դերային խաղը, գուշակությունը, անավարտ նախադասությունը, երկու աստղի և մեկ ցանկության մեթոդը, խորանարդման մեթոդը և այլն: Ուսուցման այս ժամանակակից մեթոդները դասերը դարձնում են ավելի ամբողջական, առավել հետաքրքիր և ընդգրկուն:

Այս բոլոր մեթոդների ճիշտ և տեղին կիրառման դեպքում կարելի է տեսնել, որ աշակերտները դուրս են գալիս պասիվ ունկնդրի կարգավիճակից՝ դառնալով դասապրոցեսի ակտիվ մասնակիցներ:

Սովորողի անհատական զարգացումն արդյունավետորեն իրականանում է միայն նրա նպատակաուղղված գործունեության շնորհիվ: Չեզոք, պասիվ գործունեության պարագայում հնարավոր չէ սովորողների մեջ ձևավորել հիմնական գիտելիքներ ու կարողություններ և ոչ էլ խոր համոզմունքներ ու վերաբերմունք: Սովորողին պետք է դուր գա իր ծավալած գործունեությունը, միևնույն ժամանակ այն պետք է լինի սովորողի համար մատչելի ու հասանելի:

Այսպիսով, մեթոդների կիրառումը նպաստում է՝

. ուսումնական դրական խթանի ձևավորմանը

.սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,

. ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,

. կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավմանը,

.ճանաչողական գործընթացների՝ խոսքի, հիշողության, մտածողության զարգացմանը,

.ինքնագործունեության խթանմանը,

.սովորողի անհատական, յուրահատուկ հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը,

.ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,

.սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը,

.ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանը:

Ուսուցման ակտիվ մեթոդները որպես աշակերտների ներգրավվածությունը ապահովող միջոց

Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները ՝ խոսքը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը և այլն:

Բազմաթիվ տեսություններ և դրանց կիրառման փորձի վերլուծությունն ապացուցում են, որ ամենաարդյունավետ ուսուցումը կատարվում է այն իրավիճակներում, երբ սովորողները պետք է որոշակի գործողություններ կատարեն իրենց նպատակներին հասնելու համար:

Գաղտնիք չէ, որ մեր օրերում փոխվել է վերաբերմունքը սովորելու հանդեպ: Աշակերտներն իրապես սովորում են այն, ինչ դուր է գալիս իրենց, բավարարում է իրենց հետաքրքրասիրությանը, և սովորում են ոչ թե ստիպողաբար, այլ իրենց ցանկությամբ: Դասի ընթացքում երեխաների ներգրավվածությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում՝ ներառելով ուսուցման ակտիվ մեթոդներ: Լավ է, երբ ուսուցիչը ստեղծագործաբար է մոտենում ցանկացած մեթոդի կիրառման հարցին, անհրաժեշտ փոփոխություններ է կատարում՝ հարմարեցնելով այն իր և աշակերտների նպատակներին ու խնդիրներին:

Յուրաքանչյուր դասի արդյունավետությունից բխում է ընդհանուր ուսուցման արդյունավետությունը: Առանց նախապես մտածված մեթոդների դժվար է ապահովել ծրագրային նյութի իմացությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է օգտագործել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք կօգնեն ներգրավել աշակերտին սովորելու գործընթացում, ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կզարգացնեն սովորողների մտածողությունն ու երևակայությունը: Ճիշտ ընտրված ակտիվացնող մեթոդը հետաքրքրություն է առաջացնում տվյալ առարկայի հանդեպ, օգնում է լավ մտապահել նյութը:

Ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ բոլոր աշակերտները մասնակցում են դասին, միևնույն ժամանակ դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու յուրաքանչյուրի գիտելիքներն ու իրական կարողությունները: Այստեղ ուսուցիչը ևս պետք է գործի հմտորեն: Նա պետք է իմանա յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կիրառի տարբերակված ուսուցում:

Այսօր բավական արդիական է դասի պլանում ուղղորդված աշխատանքի կազմակերպումը զույգերով կամ խմբերով: Ուղղորդված աշխատանքը ևս նպաստում է սովորողների հետաքրքրության բարձրացմանն ու ներգրավմանը դասապրոցեսին: Ուսուցիչը պետք է կարողանա կառավարել այն բանավեճը, որը հնարավոր է առաջանա խմբային աշխատանքի ժամանակ սովորողների կարծիքների տարբերության պատճառով: Նա պետք է դառնա խմբային հաղորդակցության կազմակերպողը և ուղղորդողը, զարգացնի սովորողների հաղորդակցական

հմտությունները, ապահովի բոլոր սովորողների ներգրավվածությունը զույգերով կամ խմբային աշխատանքներում: Շատ կարևոր է , որ ուսուցիչը խթանի յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը և գնահատի այն: Սակայն պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մեկ ուրիշ դասարանում արդյունավետ չլինել:

Ստորև ներկայացնեմ դասի պլանի օրինակ:

Դասի պլան

Ուսուցիչ՝ Գ. Պլուզյան

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ 4-րդ **Ամիս, ամսաթիվ՝** 20.03 2023թ.

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ «Ծաղկուն պարտեզ »

Դասի նպատակը՝

.Ծանոթանալ «Ծաղկուն պարտեզ » հեքիաթի բովանդակությանը:

.Նկարագրել հեքիաթի հերոսներին:

.Գնահատել թագավորի արարքը:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ համակարգիչ, պրոեկտոր,տեսասահիկ, գրատախտակ, կավիճ,թղթեր, տետր, գրիչ, անվանական թղթերով արկղիկ:

Մեթոդներ և հնարներ՝ Իմաստուն ծառ, անվանական արկղիկ, Т-աձև աղյուսակ, գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, անավարտ նախադասություն

Գնահատում՝ գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք,հարցադրումներ, միավորային գնահատում:

Դասի սկիզբ / 7-10 րոպե/:

Ուս.-Տրված տառանունների միջոցով որոշել թաքնված բառը՝

ՀՈԵՉՔԵԻՆԻԱՅԲԹՈ (հեքիաթ)

Գաղտնագիրը վերծանելու համար անվանական արկղիկից ուսուցիչը հանում է վեց աշակերտի անուն:

Ապա տրվում է զույգերով աշխատանք: Էկրանին ցուցադրվում են հարցեր.

1. Ի՞նչ է հեքիաթը:

2. Քանի՞ տեսակի հեքիաթներ են լինում, թվարկել:

3. Ի՞նչ հայտնի հեքիաթագիրներ գիտեք:

Տրվում է ժամանակ /5 րոպե/: Աշակերտները զույգերով քննարկում են և պատասխանում հարցերին:

Ուշադրությունը հրավիրվում է *Իմաստուն ծառի* վրա, որը ծաղկել է: Այդ ծաղիկների մեջ գրված են մարդկային հատկանիշները բնութագրող բառեր (աշխատասեր, շիտակ, խաբեբա, ազնիվ, բարեխիղճ, արդարամիտ, խարդախ,ստախոս):

Աշակերտները կարդում են և Տ-աձև աղյուսակում լրացնում լավ և վատ հատկանիշները:

Ապա էկրանի վրա ցուցադրվում է դասի նպատակները, աշակերտները ծանոթանում են այդ դասի նպատակներին:

Նոր նյութի ներկայացում /20 րոպե/: Աշակերտները մեկ անգամ ինքնուրույն կարդում են դասը: Ուսուցիչը բացատրում է *գլխահակ, ոռոգել* բառերը:

Բացատրությունը՝ գլխահակ- գլուխը կախած, գլխիկոր,

ոռոգել – ջրել, հոսելով ջուր մատակարարել:

Կազմում են բառակապակցություն՝ ընտրելով ճիշտ բառը.

գլխահակ – տուն, *մարդ*

ոռոգել – *դաշտը,* ծաղիկը

Ցուցադրվում է տեսասահիկ, որտեղ ներկայացվում է սերմի ծլումը: Ապա էկրանին

հայտնված պարտեզների նկարներից որոշում են երեք որդիներից յուրաքանչյուրի խնամած պարտեզները: Ուսուցչի կողմից բացատրվում է, որ սերմը խաշելուց հետո կորցնում է ծլելու հատկությունը: Աշակերտները թվարկում են այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են բույսի աճի համար:

Հարցեր, որոնց միջոցով նախատեսվում է ստուգել յուրացված նյութը:

1.Թագավորն ի՞նչ էր ուզում պարզել:

2.Հայրն ինչու՞ կրտսեր որդուն թագաժառանգ կարգեց:

3.Ինչպիսի՞ն էին թագավորի որդիները:

4.Թագավորի վճիռն արդարացի՞ ես համարում:

5.Այս հեքիաթը ի՞նչն է փառաբանում:

Մեկնաբանել ներկայացված ասացվածքները, լրացնել շարքը հեքիաթին համապատասխան նոր առած-ասացվածքներով:

Ուղղորդված աշխատանք / 7րոպե/: Գործնական աշխատանք:

Բաժանվել խմբերի: Աշակերտները փակ աչքերով ընտրում են մեկական փայտիկ և համապատասխան գույներով խմբեր կազմում: Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ առաջադրանք: Ուսուցիչը նախապես հիշեցնում է խմբում աշխատելու կանոնների մասին՝

-աշխատել համագործակցելով,

-լսել խմբի մյուս անդամների կարծիքը,

-աշխատել լուռ,

-աշխատանքն ավարտել ժամանակին,

- ուշադիր լսել մյուս խմբերի պատասխանները:

Խումբ 1 _ Բնագրից դուրս գրել պարզ, բարդ և ածանցավոր 5-ական բառ:

Խումբ 2 _ Բնագրից դուրս գրել հոգնակի թվով դրված ութ գոյական և դարձնել

եզակի:

Խումբ 3 _ Բնագրից դուրս գրել հինգ բայ: Դրանցից երկուսով կազմել պատմողական նախադասություններ:

Խումբ 4 – Տրված բառերով կազմել բարդ բառեր և գրել:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը:

Հայտում են կարծիքներ, թե ինչպես աշխատեցին խմբում, ինչը լավ չստացվեց, ինչ կանեն հաջորդ անգամ ավելի լավ արդյունքի հասնելու համար:

Ինքնուրույն աշխատանք /5 րոպե/: Որոշել տրված բայերի դեմքը, թիվը, ժամանակը:

Աշխատանքը ստուգվում է ուսուցչի կողմից:

Դասի ավարտ /3 րոպե/:Ավարտել նախադասությունը:

Ես այս դասից հասկացա …

Յուրաքանչյուր աշակերտ կպչուն թղթի վրա ավարտում է թերի նախադասությունը, ընթերցում և փակցնում գրատախտակին:

Տնային աշխատանք: Տրվում է տնային աշխատանք, մեկնաբանվում է տնային աշխատանքի կատարման կարգը:

Գնահատում: Կատարվում է միավորային գնահատվում, մեկնաբանվում:

Եզրակացություն

Իմ դիտարկումների արդյունքում եկել եմ այն եզրակացության, որ դասի ընթացքում երեխաների ներգրավվածությունը պահելու համար շատ կարևոր է, որպեսզի ուսուցիչը կազմակերպի հետաքրքիր դասաժամ՝ կիրառելով ակտիվ մեթոդներ:

Կարծում եմ, որ միօրինակ և ձանձրալի դասերն այսօր չեն կարող այնքան հրապուրիչ լինեն, որ ապահովեն սովորողների ակտիվությունը: Ուսուցիչը պետք է կարողանա, տիրապետելով ավանդական և ժամանակակից ակտիվ մեթոդներին, օգնի և աջակցի ուսուցմանը՝ ապահովելով արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ միջավայր, նյութեր, գործընթաց: Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ մեթոդներ ընտրի, ուղղորդի սովորողներին և դասարանում ստեղծի համագործակցության և ակտիվության դրսևորման բարենպաստ միջավայր: Որպեսզի աշակերտի զարգացումն ավելի արդյունավետ լինի, անհրաժեշտ է, որ նա ներառված լինի գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Նոր սերնդի կրթական կարիքներից ելնելով՝ անհրաժեշտ է խելամիտ զուգակցել դասավանդման ամենատարբեր՝ թե՛ ավանդական և թե՛ արդիական մեթոդները:

Ուսումնասիրելով մեթոդական գրականությունը՝ հանգել եմ այն եզրակացության, որ ակտիվ մեթոդների կիրառումը ավանդական մեթոդների համադրմամբ կարող է՝

- արդյունավետորեն նպաստել ուսուցման գործընթացում երեխաների ակտիվ մասնակցությանը և ներգրավվածությանը,

-ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի երեխաները պասիվ ընկալողներից դառնան ակտիվ գործունեության մասնակիցներ,

-հաջողության հասնելով՝ աշակերտը դառնում է ավելի վստահ,

-մեծանում է ավելին իմանալու և դասին ակտիվորեն մասնակցելու ցանկությունը:

Ակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցման ընթացքում աշակերտները գիտակցում են, որ իրենք ևս պատասխանատվություն ունեն այդ գործունեության համար, սովորում են գնահատել ուսուցչի կատարած աշխատանքը:

Առաջնային է կատարված աշխատանքի արդյունքը և դասարանում տիրող առողջ հոգեբանական մթնոլորտը: Ես գտնում եմ, որ պետք է աշակերտները ոչ միայն ակտիվ մասնակցություն ցուցաբերեն դասին, այլև իրենց հանգիստ ու հարմարավետ զգան, լինեն համարձակ, սովորեն միմյանց սովորեցնել:

Ուսուցչի դերը շատ կարևոր է, քանի որ ցանկացած մոտեցման դեպքում նա է կառավարում գործընթացը,նա է ընտրում մեթոդներն ու միջոցները, ուղղորդում աշակերտներին: Ի վերջո վերջնական արդյունքը պայմանավորվում է ուսուցչի աշխատանքով:

Գրականություն

1. Ս. Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ », Երևան, 2020թ.
2. Ա. Քյուրքչյան, Դ. Գյուրջինյան, Լ. Տեր-Գրիգորյան, Ն. Հեքեքյան , Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013թ
3. Ուսուցման մեթոդներ